


ԹՐՈՅ. Պ. ՔԱԼԱՆՔԱՐՅԱՆ

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ
ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ



ԳԵՂԱԿԱՐԱԾ

1934

ՅԵՐԵՎԱՆ

30 JUL 2010

29 AUG 2011

631-8
Ք-14
ՄԿ

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՊԱՐԱՏԱՑՈՒՄԸ

Մեր կուսակցության և կառավարության բարձրագույն որդանների վորոշմամբ այս տարի պլանով նախատեսվում է Խորհրդային Հայաստանում մշակել 18 հազար հեկտար բամբակ, այսինքն՝ 1933 թվի ցանածից 6500 հեկտարով պակաս: Բամբակի տարածության այս կրծատումը մեղ վրա պարտականություն է դնում ոգտագործել բոլոր հնարավոր միջոցները բամբակի բերքատվությունն այնքան ավելացնել, վոր վոչ միայն պլանով նախատեսված բերքը (6,7 ցենտներ հեկտարին) ապահովվի, այլ նաև գերակատարվի այդ, վորը հնարավոր և միայն և միայն աշխատանքի լավ կազմակերպման, բոլոր անհրաժեշտ ագրոտեխնիկական ձեռնարկումների, առաջին հերթին պարարտացման ժամանակին և վորակով կատարելու միջոցով:

Թե վորքան մեծ նշանակություն ունի պարարտացումը բամբակի բերքատվության բարձրացման համար յերեսում ե մեր կուսակցության 17-րդ կոնֆերանսի վորոշումներից և ընկ. ընկ. Մոլոտովի ու Կույբիշևի զեկուցման թեզերից, վորտեղ ատլած ե, վոր յերկրորդ հնդամյակում տեխնիկական կուլտուրաները, վորոնց թվում նաև բամբակը, պետք ե լրիվ ապահովեն արհեստական պարարտանյութերով: Յեկ այդ վորոշումների ու թեզերի կենսագործման համար այս տարվա պլաններով նախատեսվում է Խ. Հայաստանում պարարտացնել 5 հազար հեկտար բամբակ:

Բամբակի, ինչպես և այլ կուլտուրական բույսերի բերքի քանակը կախված է մի շաք պայմանների կիրառումից, ինչպես՝ ցանքսաշրջանառությունը, սերմերի վորակը, նրանց ա-

36/10

ոողջական դրությունը, հողի ֆիզիկական և քիմիական դրությունը և սրանց նպատակահարմար փոփոխությունները՝ հողի մշակությունը, պարարտացումը և բույսերի խնամքը:

Հողի պարարտացումը և բամբակենու խնամքը, ինչպես նաև հողի նախապատրաստելը (վարը, փոցիելը, արաթը և այլն) սերտ կերպով կապված են միմյանց հետ և հողի լավ մշակությունն ու բույսերի խնամքն են, վոր հնարավոր են դարձնում պարարտանյութերի լրիվ ոգտագործումը բամբակենու կողմից: Միայն լավ նախապատրաստված և բույսերի զարգացման ընթացքում կանոնավոր մշակող հողերում ե, վոր բույսերը հնարավորություն են ստանում լիակատար ոգտագործել հողի միջի և պարարտացման միջոցով հողը մտցվող մննդանյութերը: Հակառակ դեպքում վատ մշակված հողերում բերքի քանակը վորոշում են վոչ թե սնընդանյութերը, այլ հողի ֆիզիկական դրությունը:

Այսպես՝ վատ վարված և անխնամ, անվորակ մշակված հողերում պարարտանյութերը վոչ մինչմարելի ազդեցություն չեն անում բերքի քանակի և վորակի վրա և իզուր տեղը կորչում են: Յեկ յեթե այստեղ ավելացնենք, վոր հատկապես մեղ մոտ հողերը սաստիկ վարակված են մոլախոտերով, իսկ պարարտացման դեպքում մոլախոտերն ել ավելի յեն զարգանում և ճնշում բամբակին, ապա հասկանալի կինի, վոր պարարտանյութերի լրիվ ոգտագործման համար անհրաժեշտ ե հողի կանոնավոր մշակություն և ուժեղ պայքար մոլախոտերի և մնասատուների ու հիվանդությունների դեմ: Միմիայն այս պայմանների լրիվ իրագործման դեպքում բույսերը կարող են ուժեղ զարգանալ և նրանց արմատներն ել քիչ եներգիա գործադրելով կտարածվեն հողի մեջ և այնտեղի սնընդանյութերն ել լրիվ կերպով կոգասագործեն:

Իսկ սա տեղի յե ունենում գիտագորապես այն դեպ-

քում, յերբ հողը ժամանակին և կանոնավոր կերպով վարվում ե, ցանքսի համար պարարտացում և փոցիսի և կուլտիվատորի ողնությամբ: Պարարտանյութերի ազդեցության համար մեծ նշանակություն ունի նաև պարարտանյութերի կանոնավոր հողերը մտցնելը, այսինքն՝ պարարտացման ժամանակը, ձեզ և պարարտանյութերի քանակն ու նրանց հողը մտցնելու խորությունը:

Լավ պարարտացման միջոցով հողերի բերքը, մանավանդ յերկար տարիներ անընդհատ մշակության յենթարկվող հողերի բերքն ուժեղ կերպով բարձրանում ե, ինչպես այդ ցույց են տալիս բոլոր կուլտուրական գյուղատնտեսություններու ունեցող յերկրների թե փորձնական աշխատանքները և թե լայն գյուղատնտեսական պրակտիկան: Այդ փորձերից ամենացայտուն արդյունքները տվել են Ռուսմատեղի հոչակավոր փորձնական կայանի հիմունից ավելի տարիներ տեղու փորձը, վորտեղ մի հողակտոր մշակվել ե առանց վորեւ պարարտացման, իսկ մեկն ել ամեն տարի ստացել ե լրիվ պարարտացում (ազոտ—N, ֆոսֆոր—P և կալիում—K): Այդ հողակտորները տվել են ցորենի հետեւյալ բերքը կիլոգրամներով հեկտարից:

ՏԱՐԻՆԵՐ	ԼՐԻՎ ՊԱՐԱՐ- ՏԱՑՈՒՄ	ԶՊԱՐԱՐ- ՏԱՑՐԱԾ	ՏԱՐԻՆԵՐ	ԼՐԻՎ ՊԱՐԱՐ- ՏԱՑՈՒՄ	ԶՊԱՐԱՐ- ՏԱՑՐԱԾ
1845—1848	1905	1320	1873—1876	2266	690
1849—1852	2040	1170	1877—1880	3109	655
1853—1856	2632	1031	1881—1884	2735	873
1857—1860	2630	1167	1885—1888	2576	831
1861—1864	3254	1100	1890	2353	820
1865—1868	2738	895	1898	1978	833
1869—1872	2535	875	1900	2673	889

Այս տախտակը պարզ կերպով ցույց է տալիս, թե ինչպես լրիվ պարարտացման միջոցով ցորենի բերքը 55

տարրվա ընթացքում 1905 կիլոգրամից համառում ե 2673 և ավելի, մինչդեռ առանց պարարտացման մշակելու դեպքում հողի բերքը 1320 կիլոգրամից իջնում ե 889 և ել ավելի ցածր:

Բերքի նման բարձրացում մենք ունենք վոչ միայն հացահատիկների, այլ նաև բոլոր կուլտուրական բույսերի, հատկապես բամբակի մշակության նկատմամբ:

Այսպես՝ հնագույն բամբակագործական յերկրում Յեղիպասոսում, բամբակի պարարտացման փորձերը ցույց են տվել, վոր բամբակի բերքն այսուեղ ևս պարարտացման միջոցով համարյա կրկնապատկվել ե, ինչպես այդ յերեսում ե հետեւյալ տախտակից.

Մաքրած բամբակ մեկ հեկտարից (կիլոգրամ)

	O	NP	NPK
Առաջին սերիա 5 փորձէ միջինը	215	248	274
Երեսորդ » » »	391	346	457

Նման հետևանքներ են տվել նաև Ամերիկայում կատարված բազմաթիվ փորձերը, վորոնք ցույց են տալիս, վոր լրիվ պարարտացման դեպքում բամբակի բերքն ավելանում ե 50—60 տոկոսով, ի հարկե, յեթե միաժամանակ հողերի մշակությունը կատարվում ե կանոնավոր կերպով:

Խորհրդային Հայաստանում Պարարտացման և Աղբոհողագիտական Ինստիտուտի բազմաթիվ փորձերն ևս ցույց են տվել, վոր արհեստական պարարտանյութերի ազդեցության տակ բամբակի բերքն ավելանում ե մինչև 50 տոկոսով, միջին հաշվով 35 տոկոսով, ինչպես այդ յերեսում ե հետեւյալ տախտակից:

Բամբակի բերքի հավելումը՝ ազոտով և ֆոսֆորով պարարտացնելու հետևանքով:

Շ Ր Զ Ա Ն Ն Ե Ր	N	P	NP
Զամարլուկ շրջան	3 %	4 %	18 %
Չուրդուղուլու »	24 »	15 »	38 »
Զանգիսասարի »	32 »	13 »	32 »
Հրազդանի »	30 »	16 »	37 »
Եջմիածնի »	4 »	15 »	31 »

Այս տախտակի թվերը միաժամանակ ցույց են տալիս, վոր մեր բամբակացան շրջաններում առաջին հերթին եփփեկտ տալիս են ազոտային պարարտանյութերը և յերկրորդ հերթին՝ ֆոսֆորայինները: Թեև մեր հողերում ֆոսֆոր շատ կա, սակայն նա մեծ մասամբ մեր կուլտուրական բույսերի կողմից այնքան ել չի ոգտագործվում, ուստի մեր բամբակագործական շրջանների հողերը ֆոսֆորային պարարտացում ստանալով, բերքն ավելացնում են, թեև ազոտի հետ համեմատած շատ փոքր չափերով: Բացի այդ՝ միմիայն ազոտային պարարտանյութերի ոգտագործման դեպքում բամբակի վեգետացիան կարող է յերկարել և նրա հասունանալն ուշանալ, ուստի այս տեսակետից ևս անհրաժեշտ ե վորոշ քանակությամբ ֆոսֆորաթթվային պարարտանյութեր մացնել մեր հողերը, սակայն այս դեպքում ֆոսֆորի դոզան պետք ե ավելի փոքր ընդունել, այն ե՝ յեթե մենք մեկ հեկտարին տալիս ենք 60 կիլոգրամ ազոտ (վորը հավասար ե 300 կիլոգրամ կիրազոտի [կալցիում ցիանամիդ] կամ ամմոնիում սուլֆատ), այդ դեպքում ֆոսֆոր պետք ե տալ վոչ ավելի, քան 45 կոլոֆրամ (վորը հավասար ե 375 կիլոգրամ 12 տոկոսանոց սուլֆերֆոսֆատի): Ինչպես մեր փորձերը ցույց են տվել՝ ա-

զոտի և ֆոսֆորի այդ հարաբերությունը $N:P_2O_5 = 6:4,5$ մեղ մոտ կարող ենք առ այժմ ընդունել վորպես հիմնական հարաբերություն մինչև այդ հարցերի ավելի մանրամասն ուսումնասիրության ավարտելը:

Այս հարաբերությունը խախտելու դեպքում, յեթե ազոտն ավելի շատ տանք, կամ բամբակի հասունանալը կուշանա և բամբակը պակաս բերք կտա, կամ յեթե ֆոսֆորն ավելի շատ տանք՝ նա հողում կմնա առանց ոգտագործվելու և ավելորդ ծախք կլինի:

ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Բամբակի պարարտացումը պետք է այնպես կատարել, վոր բամբակենին մննդանյութերի ամենամեծ կարիքի ժամանակ, այն ե մինչև ծաղկելը, դրանցով ապոհոված լինի: Բամբակենու զարգացման ընթացքում մննդանյութերի կարիքը վորոշված է մի շարք անդամներ, դրանցից բերենք յերկուսը:

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում իր կատարած ուսումնասիրության ժամանակ Ֆեսկան ըստացել ե հետեւյալ տվյալները.

Բամբակենին պարունակում է չոր նյութեր տոկոսներով

Բամբակենու զարգացման շրջանը	Ա.դոս	Մոլեկ	Գոսփոր	Կալ	Կել	Մանդր
Մատղաշ բույս 2 տերենով 3. VI	3.82	17.36	3.55	2.69	5.34	1.28
Մատղաշ բույս 23. VI	3.93	16.21	2.10	1.96	4.70	1.15
Հասած բույս	1.46	5.81	0.44	1.32	1.42	0.25

Այս թվերը ցույց են տալիս, վոր բամբակենին մննդանյութերի մեծ կարիք է զգում հատկապես յուր զարգացման սկզբնական շրջանում մինչև ծաղկելը, իսկ դրանից հետո նրա պահանջն արդեն պակասում է:

Միջին Ասիայում Բլագովեշենսկու կատարած փորձերը տալիս են նման հետևանքներ, ինչպես այդ յերեսում ե հետեւյալ թվերից.

«Նավրոցկիյ» տեսակի մի բույս պարունակում է ազոտ գրամմներով՝

16/VI	8/VII	8/VIII	30/VIII	30/IX
0,004	0,044	0,019	—	0,018

Ուրեմն բամբակի պարարտացումը պետք է այն հաշվով կատարել, վոր բույսերն իրենց զարգացման սկզբնական շրջանում հողի մեջ մեծ քանակությամբ մննդանյութեր ունենան իրենց տրամադրության տակ:

Ազրոնոմիական տրադիցիան պահանջում է, վոր գարնանացաններին հատկացրած հողերը պարարտացվեն ցանքափառ մի քանի որ առաջ կամ նույնիսկ ցանքափառ հետ միաժամանակ, պատճառաբանելով, վոր պարարտանյութերն աշնանը և գարնանը ջրի շատության դեպքում կարող են հողից լվացվել և այդպիսով կարող ե սննդանյութերի կուրուստ առաջանալ: Սակայն վերջին ժամանակներում թե արտասհամանում և թե մեր Միության մեջ կատարած փորձերը ցույց են տալիս, վոր սննդանյութերի, մանաւագնդ փոսֆորի և կալիումի կորսափ յերկյուղ բոլորովին չկա: Իսկ չոր կլիմայական պայմաններում, ինչպես մեր յերկիրն է, առհասարակ վոչ միայն մննդանյութերը և լուծվող աղերը հողից չեն լվացվում, այլ նույնիսկ տեղի յեռնենում հակառակ յերկույթ, այսինքն՝ հողի վերին շերտերը հարստանում են լուծվող աղերով ի հաշիվ նրաներքին շերտերի, վորովհետև հողից գոլորշիացող ջուրն իրեն հետ նրա ներքեւի շերտերից բերում է լուծված աղեր, ինքը գոլորշիանում է, իսկ աղերը մնում են հողի վերին շերտերը: Այդ պատճառով ել այն յերկյուղը, թե պարարտա-

Նյութերն աշնանը հողը մտցնելու հետևանքով կարող ե
մննդանյութերի լվացում տեղի ունենալ, բոլորովին անհիմն
է: Ֆոսֆորային և կալիումի պարարտանյութերի մասին
նույնիսկ կարելի յե տաել, վոր լավ կլիներ, յեթե նրանք
հողի մեջ ծծվող ջրի հետ գնային ավելի խոր շերտերը,
սակայն դժբախտաբար այդ տեղի չի ունենում, վորովհետեւ
նրանք հողի վերին շերտերում կլանվում և փիկսվում են:
Այդ տեսակետից ազոտային պարարտանյութերը վորոշ չա-
փով տարբերվում են իրենց շարժունությամբ, սակայն սր-
բանք ևս միայն այն դեպքում են հողից լվացվում, յերբ
նրանք ազոտական թթվի աղերի յեն վեր ածվում և այն
ել յեթե ստորերկրյա ջրերը միացած են հողի վերին շեր-
տերից ծծվող վերերկրյա ջրերի հետ: Յեվ վորովհետեւ այդ
յերեսույթը մեզ մոտ տեղի չունի, ուստի վոչ մի հիմք չկա
սնդելու, թե յեթե պարարտանյութերն աշնանը հողը մըտ-
ցնենք, կարող ենք կորուսաներ ունենալ:

Մինչդեռ գարնանը մեր տրամադրության տակ յեղած
ժամանակը շատ քիչ ե, համեմատաբար կարճ ժամանա-
կում մենք պետք ե ցանքու վերջացնենք, ուստի աշնանից
պարարտացնելլ ժամանակի մեծ խնայողություն ե տալիս
և աշխատանքի կազմակերպության տեսակետից շատ կա-
րևոր հանգամանք ե: Այստեղ պետք ե ավելացնել, վոր Մի-
ջին Սախայի փորձնական կայանների դրած փորձերն ել
ցույց են տալիս, վոր աշնանից պարարտացըրած հողերում
վոչ միայն մննդանյութերի կորուստ տեղի չի ունենում և
պարարտանյութերի եֆֆեկտը պակասում, այլ ընդհակա-
ռակը՝ աշնան պարարտացումն ավելի մեծ եֆֆեկտ ե տա-
լիս, քան գարնան պարարտացըրածը: Այսպես՝ Բամբակաբու-
ծական Խստիտուտի փորձերը տվել են հետևյալ արդյունք-
ները.

ԲԵՐՔԸ ցԵՆՏՐԱԿՐՈՎ, ՀԵԼՊԱՐԻՑ

ԿՈՆՏՐՈԼ	Պարարտանյութերը մտցրած աշնանը	Պարարտանյութերը մացրած դարնանը
14	23	17,9

Ֆոսֆորային և ազոտային պարարտանյութերն աշնա-
նից հողը մտցնելով ավելի մեծ եֆֆեկտ են տալիս, քան
թե գարնանից, վորը ցույց ե տալիս, վոր հողից վոչ մի
լվացում տեղի չի ունենում: Նույն արդյունքն են ստացել
նաև Միջին Սախայի փորձնական կայանները ջրերու նկատ-
մամբ: Այսինքն՝ ջրելուց առաջ պարարտացըրած դաշտերի
բերքն ավելի մեծ ե, քան ջրելուց հետո պարարտացըրած-
ներինը: Այս և մի շաբթ այլ տվյալներ ցույց են տալիս,
վոր աշնան պարարտացումը վոչ միայն հետ չի մնում գար-
նան պարարտացումից, այլ շատ դեպքերում նույնիսկ գե-
րազանցում են: Ուրեմն՝ պարարտանյութերը պետք ե հողը
մտցնել աշնանը բամբակի հողերը վարելու ժամանակ:

ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ԶԵՎԵՐԸ

Բամբակի պարարտացումը կարելի յե կատարել թե
ձեռքով և թե մեքենաներով: Վերջերս Ամերիկայում կա-
տարած փորձերը ցույց են տվել, վոր մեքենայով կատա-
րած պարարտացումն ավելի մեծ եֆֆեկտ ե տալիս, քան
ձեռքով կատարածը: Մեքենայով պարարտացնելու ժամա-
նակ ել, ինչպես ցույց են տվել մինչև այժմ կատարած
փորձերը, ամենալավ արդյունք այն ժամանակ ե մտացվում,
յերբ պարարտանյութերը մտցվում են շարքերի մեջ շար-
քից 6—7 սանտիմետր հեռավորության վրա և 5—7 սան-
տիմետր ավելի խոր, քան թե սերմերն են մտցվում: Շար-
քերի մեջ մտցնելու դեպքում յեթե պարարտանյութերն
անմիջապես շփվում են սերմերի հետ՝ հաճախ բերքի խիստ

անկում և նկատվում (մինչև 40%), իսկ յեթե մտցվում են սերմերից խոր կամ յերես, այդ գեղում չնայած բերքի հավելում նկատվում է, սակայն շատ փոքր չափով պարարտանյութերը շարքերի մեջ մտցնելու համեմատությամբ:

Ինչ վերաբերում է ձեռքով պարարտացնելուն, պետք է ասել, վոր ավելի լավ է պարարտանյութերը հողի մեջ հավասարապես տարածելու համար նրանց խառնել խոնավ հողի հետ (նայած պարարտանյութերի քանակին նրա կը ոփ 1-ից 2-ի չափով) և ապա հավասարապես շաղ տալ հողի յերեսին: Հավասարապես շաղ տալը շատ մեծ նշանակություն ունի, վորովհետև անհմասար ցըելու դեպքում, մանավանդ կույտերով պարարտացնելու դեպքում, ստացվում է հողի խայտարդետություն և շատ անգամ նույնիսկ բերքի անկում: Այս գեղում բույսերի մի մասը բուրովին պարարտանյութ չի ստանում, մի մասն ել այնքան շատ և ստանում, վոր ֆլասվում է: Այսպես ուրեմն՝ ձեռքով պարարտացնելու դեպքում մննդանյութերը պետք է հնարավորին չափ հավասարապես տարածել հողի յերեսին և ապա մտցնել հողի մեջ տարբեր գործիքներով, նայած պարարտացման ժամանակին:

ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԸ ՀՈՂԸ ՄՏՑՆԵԼՈՒ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Պարարտանյութերը ցըելուց հետո նրանց պետք է մտցնել հողի մեջ տարածելով հավասարապես վարելաշերտի մեջ: Սակայն այս աշխատանքը պետք է այնպես կատարել, վոր պարարտանյութերը շատ խոր չընկնեն, վորովհետև, ինչպես զիտենք, բամբակենու մնող արմատները տարածվում են հողի վերին վարելաշերտում 15—20 սանտիմետր խորությամբ, Պարարտանյութերն ել պետք է մտցնել հենց այս խորությամբ, ավելի խոր մտցնելու դեպքում նրանք անմատչելի յեն դառնում բամբակենու մնող արմատների համար և բերքը չեն ավելացնում: Ավելի յերես ևս չի կարելի մտցնել, վորովհետև այս գեղում ևս պարարտանյութերը բույսերի համար մատչելի չեն լինում: Պետք է այս

տեղ շեշտել, վոր պարարտանյութերը, ազոտայինների բացառությամբ, հողի մեջ շատ դանդաղ են շարժվում վերից վար և վարից վեր, մանավանդ ֆուֆորաթթվային պարարտանյութերը, վորոնք հենց վորտեղ ընկնում են, այնտեղ ել կլանվում են հողի կողմից, և յեթե նրանք կլանվում են բույսերի արմատներից հեռու, ուստի բույսերն այդ սընունդը ոգտագործել չեն կարող: Այդ պատճառով ել պարարտացնելիս պետք է պարարտանյութերն այնպիսի խորությամբ մտցնել հողը, վորպեսզի բույսերի արմատների տարածման շրջանից դուրս չմնան:

Պարարտանյութերը հողի մեջ մցնելու աշխատանքը պետք է կատարել հետևյալ ձեռք: Յեթե պարարտացնում ենք աշխատ վարած հողերը գարնանը, պետք է պարարտանյութերը ցըել կրկնավարից առաջ և կրկնավարը կատարելու հողը լավ փոցիւել: Իսկ յեթե կրկնավարը չենք անում այդ գեղում պարարտանյութերը ցըելուց հետո հողը պետք է մշակել կուլտիվատորով և ապա փոցիւել, կամ փոցիւել յերկու անգամ:

Իսկ յեթե պետք է պարարտացնել աշխանից չվարված հողը՝ այդ գեղում պարարտանյութերը ցըել վարից առաջ և ապա վարել: Թեև այստեղ պետք է ասել, վոր ինչպես վերը տեսանք, ավելի լավ է պարարտանյութերը հողը մտցնել աշխանը վարելուց առաջ, այս գեղում թե բերքըն և ավելանում և թե գարնան աշխատանքներն են հեշտանում:

Պարարտանյութերը բացի բերքի քանակին ավելացնելուց ազդում են նաև նրա վորակի վրա և այն ել տարբեր պարարտանյութեր տարբեր ձեռք: Այսպես՝ միակողմանի ազդային պարարտանյութերը վատացնում են բամբակի թելի վորակը, նույնն և անում նաև մեծ քանակությամբ գործածվող գոմազը: Ազդուի այդ վատ հատկությունը սակայն չեղոքանում և ֆուֆորաթթվի և կալիումի ոգնությամբ, մեզ մոտ բավական և միայն ազդային ավելացներ

Վորաբերաթթու, վորպեսզի բերքի վորակն ևս բարձրանաւ:
Իսկ կալիումի կարիքը մեզ մոտ դեռևս չի հայտնաբերված,
վորովինետև մեր հողերը կալիումով շատ հարուստ հողեր
են: (Այս առթիվ պետք է ասել, վոր թեև այդ ճիշտ է, սա-
կայն մեզ անհրաժեշտ է կալիումի ուսումնասիրությունն
ավելի մանրամասնորեն կատարել վորովինետև, չնայած
ընդհանուր առմամբ մեր բոլոր հողերն ել կալիումով
շատ հարուստ են, սակայն կարող են այնպիսի հողեր ել
գտնվել, վորնոք կալիումի կարիք ունենան):

Թե ինչպես են ազգում տարբեր պարարտանյութերը
բերքի վորակի վրա՝ յերեսում ե թելիկների դիմացկունու-
թյունը վորոշելու տվյալներից: Հստ այդ տվյալների
բամբակի թելիկների դիմացկունությունը հավասար է՝

Զպարարտացրած	6,92	դրամի
Գոմաղբով պարարտացրած . . .	5,75	"
Արհեստական պարարտանյու-		
թերով պարարտացրած	9,57	"

Այսպես ուրեմն մենք տեսնում ենք, վոր կանոնավոր
պարարտացման դեպքում ավելանում ե վոչ միայն բերքի
քանակը, այլ նաև նրա վորակը, հետևապես մեր բամբա-
կացան շրջանների կողեկանիլ տնտեսությունները պետք ե
լուրջ ուշադրություն դարձնեն պարարտացման գործի
վրա, հրանճանգելով պարարտացնող բրիգադներին այդ աշ-
խատանքն առանձին հոգատարությամբ կատարելու համար:

Ինչ վերաբերում ե յուրաքանչյուր հեկտար հողին
տրվելիք պարարտանյութերի քանակին, պետք ե ասել,
վոր մենք դեռևս բոլոր շրջանների համար ոպտիմալ դո-
գաներ չենք վորոշել, սակայն նախնական տվյալները
ցույց են տալիս, վոր Խ. Հայաստանի բամբակացան շրր-
ջաններում պետք ե յուրաքանչյուր հեկտարին տալ 60
կիլոգրամ ազոտ և 45 կիլոգրամ ֆոսֆոր և այդ նոր-
մաներն ել ընդունված են ՄՏ Կայանների կողմից:

Պարարտացման ճիշտ դոզաները վորոշելը յերկար
ժամանակ պահանջող աշխատանք է և Հայաստանի Պարար-
տացման և Ազգո-հողագիտական ինստիտուտը մենակ կա-
տարել չի կարող: Այսեղ պետք ե ողնության գան իրենք՝
կողեկտիվ և խորհրդային տնտեսությունները, վորձեր դնե-
լով իրենց անտեսություններում: Առհասարակ պետք ե ասել,
վոր այսուհետև վորձնական գործն ևս պետք ե դառնա
սոցիալիստական սեկտորի հիմնական աշխատանքներից
մեկը: Վորովինետև այդ տնտեսություններն այն ժամանակ
կարող են հաջողությամբ տանել իրենց աշխատանքները,
յերբ նրանք իրենց հողերը շատ լավ կճանաչեն, յերբ
նրանք կպարզեն, թե նրանց վոր հողակտորն ինչպիսի
հատկություններ ունի և ինչ պարարտանյութերի կարիք
ունի ու ինչ չափով: Արդեն ժամանակն ե այդ աշխատանք-
ներն սկսել և դա պետք ե կատարվի ՄՏ Կայանների
քիմիկատորների և Պարարտացման ինստիտուտի հրահան-
գիչների գեկավարությամբ:

Հայտնի յէ, վոր այժմ բամբակի և առհասարակ բոլոր
կուլտուրաների նկատմամբ մենք արդեն անցել ենք սերմ-
նափոխական ցանքսաշրջանության կիրառման և բամ-
բակի համար մեր հողժողկոմատի կողմից ընդունված ու
Միութենական հողժողկոմատի կողմից հաստատված ե հե-
տեվյալ ությաշայան ցանքսաշրջանությունը.

1. Բամբակ, 2. բամբակ, 3. բամբակ, 4. բամբակ, 5.
գարնանացան, 6. աշնան ցորեն+առվույտ, 7. առվույտ և
8. առվույտ:

Արդ, այս ցանքսաշրջանառության մեջ գտնվող բոլոր
բույսերն և բոլոր դաշտերը միատեսակ պարարտացնել չի
կարելի, այլ այդ աշխատանքը պետք ե դասավորել ըստ
բույսերի և ըստ մի դաշտից մյուսն անցնելու ժամանակի
հողի զրության: Այժմ տեսնենք, թե մեր ընդունված և
կիրառվող ցանքսաշրջանառության մեջ բամբակի վոր դաշ-
տերը և ինչպես պետք ե պարարտացնել:

Առվույտից հետո յեկող առաջին և յերկրորդ բամբակները

չպետք ե պարարտացնել, վորովհետեւ առվույտի հավաքածազոտը միանգամայն բավական ե այդ բամբակների համար, իսկ ինչ վերաբերում ե փոսֆատին սա ևս կբավարարի, շնորհիվ այն հանգամանքի, վոր նախ՝ առվույտը պետք ե պարարտացվի փոսֆատով և յերկրորդ՝ առվույտի արմատներն այնքան շատ փոսֆոր են լուծում և իրենց մեջ կուտակում, վոր նրանց քայլայման հետևանքով ազատվող փոփորը միանգամայն բավական ե այդ յերկու տարվա բամբակի համար:

Հետեւյալ յերկու տարվա բամբակն անպայման պետք ե պարարտացնել: Յերրորդ տարվա բամբակը պետք ե պարարտացնել այնպիսի քանակի պարարտանյութերով, վոր այդ բավարարի նաև չորրորդ բամբակին:

Յեթե յերրորդ բամբակը պարարտացնենք 90 կիլոդրամ ազոտով և 60 կիլոգրամ փոսֆորով, այդ գեղքում միանգամայն ապահովված կլինի նաև չորրորդ տարվա բամբակը, հատկապես այն դեպքում, յերբ վորպես ազոտային պարարտանյութ գործադրենք կիրազոտը (կալցիում ցիանամիդ), վորը հետագայում լինելու յե մեր բամբակացան շրջանների հիմնական ազոտային պարարտանյութը:

Ցանքսաշրջանառության մեջ մտնող մյուս բույսերն անհրաժեշտ ե պարարտացնել հետեւյալ հաջորդականությամբ: Բամբակից հետո յեկող գարնանացանը նույնպես ապահոված կլինենք սննդանյութերով, վորովհետև նախորդ տարիների բամբակն արդեն լրիվ պարարտանյութ ե ստացել, նրա չոպտագործած մասը բավական ե նաև գարնանացանի համար:

Ինչ վերաբերում ե հետեւյալ բույսին՝ աշնան ցորենին, ապա նրա պարարտացումը կախված ե գարնանացան բույսից: Յեթե գարնանացանը թիթեռնածաղիկ բույս ե յեղել, ապա աշնան ցորենն ազոտով ապահոված կլինենք և անհրաժեշտ կլինի ցորենը պարարտացնել միայն փոսֆորաթթվով և այն ել այն հաշվով, վոր այդ փոսֆ-

րաթթուն բավարարի նաև գարնանը ցորենի մեջ ցանվել մեք առվույտին: Իսկ յեթե գարնանացանը վոչ թիթեռնածաղիկ բույս ե, այդ գեղքում անհրաժեշտ կլինի աշնան ցորենը պարարտացնել ազոտով և փոսֆորով, ըստ վորում ազոտ պիտի տալ 90 կիլոգրամ և փոսֆոր՝ 60 կիլոգրամից վոչ պակաս: Ազոտ պետք ե տալ 90 կիլոգրամ այն պատճառով, վոր Պարարտացման Խստիտուտի փորձերը ցույց են տվել, վոր այդ քանակը հանդիսանում ե մեր գաշտավայրում աշնան ցորենի ուղիմալ դոզան: Բայց այդ՝ ազոտի մի մասն ել կողտագործի առվույտն իր գարգացման սկզբնական շրջանում, մինչև նրա վրա պալարներ առաջանալը, վորոնք այնուհետև կապահովեն առվույտն ազոտով:

Առվույտի համար անհրաժեշտ փոսֆորաթթուն պետք ե տալ աշնան ցորենին, վորովհետև ինչպես վերն ասացինք, փոսֆորը հողի մեջ շատ դանդաղ է շարժվում, ուստի յեթե փոսֆորը հողը մտցնելու լինենք, ցորենը հսձելուց հետո նա կմնա հողի վերին շերտում և առվույտն այդ ոդտագործել չի կարող: Միայն՝ վերջին տարվա առվույտին պետք ե տալ 45-60 կիլոգրամ փոսֆորաթթու և փոցխով մտցնել հողի մեջ, վորպեսզի դրա մի մասը ոգտագործի առվույտը, մի մասն ել նաև բամբակին, հակառակ գեղքում առվույտի հավաքած մեծաքանակ ազոտը կարող ե ազոտի և փոսֆորի հավասարակշռությունը խախտել և բամբակի վեգետացիան յերկարացնել:


Այսպես ուրեմն, ցանքսաշրջանառության մեջ մշակվող բամբակը պետք ե պարարտացնել հետեւյալ ձևով: առաջին յերկու բամբակը չեն պարարտացվում, յերրորդ բամբակը պարարտացվում ե 90 կիլոգրամ ազոտով և 60

Կիլոգրամ ֆոսֆորաթթվով։ Գարնանացանը չի պարարտացվում։ Աշնան ցորենը պարարտացվում է այն հաշվով, վոր սննդանյութերվ ապահովվի նաև ցորենի մեջ ցանվող առվույտը և վերջապես վերջին առվույտն ըստանում է 40—60 կիլոգրամ ֆոսֆորաթթու, այն հաշվով, վոր առաջին բամբակն ապահովվի այդ սննդանյութով։

Տեխն. խմբագիր՝ Պ. Սարյան
Սբրուգրիչ՝ Սոռ Հակոբյան

Հանձնվել ե արտադրության 1934 թ. փետրվ. 5-ին.
Ստորագրվել ե ապագրելու 1934 թ. փետրվ. 11-ին.
Դրավիճակ № 57 Տիրամ 2000 Պատվիք № 83
Մեկ ապագր. թերթում 61.440 առ. նշ.

ԵԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՂԱՔԻ ՑԱՐԱՐԱՆ, ԽԱՄԲԱԴՅՈՒՆ 50



17. 456

ԳԻՒԸ 25 Կ.



Проф. П. КАЛАНТАРИН

Удобрение хлопчатника

Сельхозгиз 1934 Эреванъ